ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 օգոստոսի 2021թ. թիվ 233-Ա

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 9-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2008 թվականի մարտի 20-ի թիվ 9-Ա կարգադրության 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

Հ.Ղալումյան - ՀՀ Տավուշի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Ն.Ղուշչյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ
Ռ.Տիգրանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջ. և սոց. ապահովության վարչության պետ
Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող
Ա.Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Մ.Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող
Մ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Հ.Քոչարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ,
Ն.Ճաղարյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ,
Ն.Սարգսյան - ՀՀ ԱՍՀՆ Միասնական սոցիալական ծառայությունների Դիլիջանի տարածքային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/
Ա.Ներսիսյան - ,,Հույսի կամուրջ,, ՀԿ-ի Իջևանի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/
Է. Ալեքսանյան - ,,Նոյաստղ հաշմանդամ երեխաների ծնողների միություն,,ՀԿ-ի նախագահ

/համաձայնությամբ/

Շ.Օրդինյան - Հայկական Կարմիր խաչի ընկերության Տավուշի մարզային մասնաճյուղի նախագահ /համաձայնությամբ/

Մերի Գևորգյան - Տավուշի թեմի առաջնորդարանի սոցիալ-կրթական ծրագրերի ղեկավար /համաձայնությամբ/

Լ.Գրիգորյան - ՀՕՖ-ի Բերդի գրասենյակի տնօրեն, /համաձայնությամբ/

Կ.Կարապետյան - Վորլդ Վիժն միջազգային կազմակերպության ՄԲԿ երեխաների պաշտպանության և կրթական ծրագրերի Տավուշի մարզի համակարգող /համաձայնությամբ/

Ռ.Արզումանյան - ,,Հույսի կամուրջ,, ՀԿ-ի Դիլիջանի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/:

2. ՀՀ Տավուշի մարզպետի 2008 թվականի մարտի 20-ի թիվ 9-Ա կարգադրության 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

10.08.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

9 օգոստոսի 2021թ.
Քաղաք Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի
09.08.2021թ. թիվ 233-Ա որոշման

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Տավուշի մարզային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև սույն աշխատակարգով:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելը.

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ մշակելը.

3) հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելը.

4) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը.

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար՝

1) համապատասխան պետական լիազոր մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության և սոցիալական ներառման տարեկան և համալիր ծրագրերի իրականացման վերաբերյալ.

2) ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և դրա վերաբերյալ լիազորած մարմնին ներկայացնում իր առաջարկությունները.

3) համապատասխան ոլորտների լիազոր մարմիններ է ներկայացնում առաջարկություններ հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող անձանց համար հավասար պայմանների ստեղծման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ.

4) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ.

5) քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ տալիս եզրակացություն.

6) ուսումնասիրում և վերլուծում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման պատճառները և համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ ներկայացնում առաջարկություններ.

7) ուսումնասիրում և վերլուծում է հաշմանդամության առաջացման պատճառները և ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

8) նախապատրաստում է նախորդ տարվա ընթացքում հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվություն Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար.

9) քննարկում և Հայաստանի Հանրապետության վարչապետին, նախարարներին, տեղական ինքնակառավարման մարմիններ է ներկայացնում քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

10) տվյալ ոլորտի լիազոր պետական մարմին է ներկայացնում առաջարկություն հաշմանդամություն ունեցող և հաշմանդամություն չունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման գործընթացների զարգացումները վերահսկելու, որոշակի խնդիրներ հետազոտելու և վերլուծելու նպատակով.

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է **ՀՀ Տավուշի մարզպետը**:

7. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:

8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:

9. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:

10. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 4 ամիսը մեկ անգամ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

11. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ, նրա հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստն սկսվելուց 7 օր առաջ: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

12. Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին առնչվող նյութեր, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը: Հավասար ձայների առկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Արձանագրությունը հանձնաժողովի անդամներին է ուղարկվում նիստից ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում:

14. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումներն ու արձանագրությունները, ինչպես նաև հանձնաժողովի գործունեության հետ կապված գրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

6) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

16. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.

3) ներկայացնում է առաջարկություններ հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

5) կատարում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները:

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում հանձնաժողովի անդամներին.

2) հանձնաժողովի անդամներին իրազեկում է հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա, վայրի և ժամի մասին, անհրաժեշտության դեպքում իրազեկում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների նիստերի անցկացման օրակարգի, օրվա, վայրի և ժամի մասին.

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.

4) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) նիստերի որոշումները և արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ուղարկում է հանձնաժողովի անդամներին, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամներին

18. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա աշխատանքից ազատվելու դեպքում.

2) նրա մահվան դեպքում.

3) իր դիմումի համաձայն.

4) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշումով, եթե նա մեկ տարվա ընթացքում 2 անգամ բացակայել է անհարգելի պատճառներով, կամ մեկ տարվա ընթացքում բացակայել է հանձնաժողովի բոլոր նիստերից:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ